ԱՐԴՅՈ՞Ք ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՄ ՀՈՍՊԻՍԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ:

Դուք համապատասխանում եք հոսպիսի պահանջներին, եթե՝

- Ձեր բժիշկը տեղեկացնում է ախտորոշման մասին՝ հայտնելով, որ Ձեր կյանքին մնացել է 6 ամիս կամ ավելի պակաս ժամանակահատված:
- Բուժօգնության նպատակն է բուժել Ձեր ախտանիշները և առավելագույնի հասցնել Ձեր կյանքի որակը:

Հոսպիսի մասին խոսք բացելու համար մարդկանցից հաճախ շատ երկար ժամանակ է պահանջվում: Այդ մասին խոսելը նախքան դրա կարիքը ունենալը թույլ կտա համոզվել, որ Ձեր ընտանիքն ու բժիշկները գիտեն և հասկանում են Ձեր ցանկությունները:

- Դուք կշարունակեք բուժօգնություն ստանալ այլ հիվանդությունների համար:
- Դուք կշարունակեք ստանալ հանգստությունը պահպանելու համար համապատասխան դեղամիջոցներ:
- Դուք կկարողանաք կապ պահպանել Ձեր ուռուցքաբանական թիմի և Ձեր բուժող բժշկի հետ:
- Դուք կստանաք էմոցիոնալ, հոգեբանական և հոգևոր աջակցություն:
- Ձեր ընտանիքը կկարողանա մասնակցել խնամքի և հոգևոր աջակցության ընթացքին:

Ուշադրության կենտրոնում Ձեզ բուժելն է, այլ ոչ թե քաղցկեղը:

Ո՞Վ ՀՈԳ ԿՏԱՆԻ ԻՄ ՄԱՍԻՆ, ՔԱՆԻ ԴԵՌ ԵՍ ՀՈՍՊԻՍՈՒՄ ԵՄ:

Ընտանիքի անդամը կամ ընկերը կարող է լինել Ձեր հիմնական խնամակալը: Բացի այդ, հոսպիսում գտնվելու ընթացքում Ձեզ հասանելի են հետևյալ մասնագետները.

- Բուժքույր
- Օգնական
- Հոսպիսի բժիշկ
- Սննդաբան
- Սոցիալական աշխատող
- Հոգևոր խորհրդատու

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԾԱԾԿՎՈՒՄ ՀՈՍՊԻՍԻ ԾԱԽՍԵՐԸ

Հոսպիսի ծառայությունների մեծ մասը ծածկվում է Medicare-ի, Medicaid-ի և մասնավոր ապահովագրության միջոցով: Վճարունակության մակարդակը հիվանդին մերժելու հիմք չէ: Որոշ ծառայությունների համար կարող է պահանջվել համավճար: Հոսպիսի աշխատակիցները կտեղեկացնեն Ձեզ, եթե լրացուցիչ վճարումներ պահանջվեն:

ՈՒՐԻՇ Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՄ

Ցանկացած պահի կարող եք ցանկացած պատճառով չեղարկել և կրկին գրանցվել այն ժամանակ, երբ պատրաստ կլինեք:

Հարցրեք Ձեր ուռուցքաբանին Ձեր տարածաշրջանում հոսպիսների մասին տեղեկություններ ստանալու համար:

MOQC
MICHIGAN ONCOLOGY QUALITY CONSORTIUM

Blue Cross Blue Shield of Michigan

Nonprofit corporations and independent licensees of the Blue Cross and Blue Shield Association

Ի՞նչ պետք է իմանամ ՀՈՍՊԻՍԻ մասին

ԻՆՉՈ՞Ւ ՀՈՍՊԻՍ

Հոսպիսի մասին խոսք բացելու համար մարդկանցից հաճախ շատ երկար ժամանակ է պահանջվում: Այդ մասին խոսելը նախքան դրա կարիքը ունենալը թույլ կտա համոզվել, որ Ձեր ընտանիքն ու բժիշկները գիտեն և հասկանում են Ձեր ցանկությունները:

- Դուք կշարունակեք բուժօգնություն ստանալ այլ հիվանդությունների համար:
- Դուք կշարունակեք ստանալ հանգստությունը պահպանելու համար համապատասխան դեղամիջոցներ:
- Դուք կկարողանաք կապ պահպանել Ձեր ուռուցքաբանական թիմի և Ձեր բուժող բժշկի հետ:
- Դուք կստանաք հուզական, հոգեբանական և հոգևոր աջակցություն:
- Ձեր ընտանիքը հասանելի կլինի հոգատարության, հոգևոր աջակցության և վշտի համար:

Ե՞ՐԲ

Դուք պետք է ընտրեք հոսպիսը, երբ.

- Դուք ցանկանում եք ունենալ կյանքի որակ բուժման քանակի փոխարեն:
- Բուժումն առավելապես նման է բեռի:
- Դուք և Ձեր բժիշկը հաստատում եք, որ քաղցկեղի բուժման արդյունքում ոչ մի էական բարելավում տեղի չի ունենում:
- Քաղցկեղի բուժման կողմնակի ազդեցությունները գերազանցում են օգուտը:
- Դուք գիտեք, թե ինչպես եք ցանկանում ապրել Ձեր կյանքը այս շրջանում:
- Դուք զրուցել եք Ձեր ընտանիքի անդամների հետ, և նրանք հարգում և արժևորում են Ձեր որոշումը:

Հոսպիս նշանակում է կյանքի որակ և իմաստ:

Ի՞ՆՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԾԱԾԿՎՈՒՄ ՀՈՍՊԻՍՈՒՄ:

- Դեղորայք, բժշկական սարքավորումներ և պարագաներ: Ձեր հարմարավետության համար անհրաժեշտ բոլոր դեղամիջոցները կտրամադրվեն հոսպիսի կողմից:
- Կարճաժամկետ ստացիոնար խնամք հավանության արժանացած հաստատություններում այն ախտանիշների համար, որոնք հնարավոր չէ վերահսկել տանը
- Տնից հեռու ժամանակավոր խնամքի ապահովում, որը կոչվում է նաև կարճատև դադար խնամքից: Բուժօգնությունը պետք է տրամադրվի հավանության արժանացած հաստատությունում:

Մի շարք հոսպիսներ ունեն կամավորներ ընկերակցության նպատակներով: Որոշ հոսպիսներ առաջարկում են երաժշտություն, մերսում և (կամ) տնային կենդանիներով թերապիա: Խոսեք Ձեր հոսպիսի մատակարարի հետ այն ծառայությունների մասին, որոնք առավել կարևոր են Ձեզ համար:

ՈՐՏԵ՞Ղ Է ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ ՀՈՍՊԻՍԸ

Սովորաբար խնամքը տրամադրվում է Ձեր տանը, ընտանիքի անդամի կամ ընկերոջ տանը: Երբ Ձեզ խնամում են տանը, Ձեր խնամակալները կարող են դիմել հոսպիս 24 ժամ, շաբաթը 7 օր հեռախոսով՝ աջակցություն ստանալու համար:

Հոոսպիսային խնամքը կարող է տրամադրվել նաև հետևյալ վայրերում՝

- Մասնագիտացված բուժքույրական հաստատությունում (Skilled Nursing Facility, SNF)
- Ծերանոցում (Assisted Living Facility, ALF)
- Մեծահասակների խնամքի տանը (Adult Foster Care, AFC)
- Հոսպիս կենտրոնում

Հոսպիսի ընտրության ժամանակ Դուք կշարունակեք ստանալ ամենաբարձր որակի բուժօգնություն: